

Համաձայնեցված է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌՆՆԹԵՐ  
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՍՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ  
ՆԱԽԱԳԱՀ

\_\_\_\_\_ Տ. Դավթյան

\_\_\_\_\_ Գ. Խաչատրյան

1 հոկտեմբերի 2010 թ.

N 646-Ն

5 հոկտեմբերի 2010 թ.

N 13

**Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Պ Ա Ր Զ Ա Բ Ա Ն ՈՒ Մ**

**«ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 38-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ**

«Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (30 սեպտեմբերի 1997 թվական, ՀՕ-155, այսուհետ՝ Օրենք) 9-րդ հոդվածի համաձայն հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամտից կատարվում են Օրենքով նախատեսված նվազեցումները (ծախսեր, կորուստներ, այլ նվազեցումներ), ընդ որում՝ նվազեցումների միևնույն գումարը համախառն եկամտից հանվում է միայն մեկ անգամ: Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է դրա ստացման հետ կապված անհրաժեշտ և փաստաթղթերով հիմնավորված ծախսերի չափով, իսկ նույն հոդվածի 2-րդ մասի «բ» կետի համաձայն աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումները դասվում են ծախսերի թվին: Համախառն եկամտից ծախսերը նվազեցվում են Օրենքի 32-րդ հոդվածին համապատասխան:

Օրենքի 38-րդ հոդվածի համաձայն հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է կազմակերպության մոտ վարձու աշխատող յուրաքանչյուր հաշմանդամի համար հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների 150%-ի չափով: Նշված հոդվածի կիրառման հետ կապված հարցերի ճշտման նպատակով՝ ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 87-րդ հոդվածի 2-րդ մասով, **պաշտոնապես պարզաբանում եմ.**

Յուրաքանչյուր հաշմանդամ վարձու աշխատողի հաշվով համախառն եկամտից կատարվում են հետևյալ նվազեցումները՝

1) հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների ծախսերի չափով՝ Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասին և 32 հոդվածին համապատասխան.

2) հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների ծախսերի 150%-ի չափով՝ որպես համախառն եկամտից կատարվող այլ նվազեցում (անգամ եթե աշխատավարձը և դրան հավասարեցված այլ վճարումները չեն հանդիսանում համախառն եկամտի ստացման հետ կապված անհրաժեշտ ծախս):